VI

ՊԱՐ
ԵՒ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹ

DOI: 10.54503/2953-805X-2026.8-138

Արծվի Բախչինյան, *բ.գ.թ.*
ՊՀ

ՊԱՐԱՀԱՆԴԵՍՆԵՐԸ ՀԱՅ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Հիմնաբառեր՝ *բալետ, պարահանդեսներ, հայկական մոտիվներ, հնդկահայեր, հայ գրողները բալետի մասին, հոդվածներ պարի մասին:*

Երբ և որտեղ է արդյոք հայն առաջին անգամ առնչվել եվրոպական և մասնավորապես՝ պարահանդեսային պարերին: Հարցը հետաքրքրական է թե՛ պատմական, թե՛ մշակութաբանական առումով: Մեր համոզմամբ՝ դա տեղի է ունեցել արդեն 18-րդ դարի վերջին, հնդկահայ համայնքում, որտեղ սերտ են եղել առնչությունները Հնդկաստանը գաղութացրած անգլիացիների հետ: Հնդկահայ ականավոր գործիչ Հովսեփ Էմինն իր հուշերում նշել է, որ Կալկաթայում 1769–1770 թթ. ապրած տարիներին մասնակցել է պարտեզներում կազմակերպված պարահանդեսների ու համերգների[1]:

Հայոց անդրանիկ պարբերականի՝ «Ազդարար»-ի էջերում հանդիպում ենք 1794-ին Մադրասի հայերի հարսանիքի նկարագրության, որում կարդում ենք հետևյալը. *«…մերձ 9 ժամոյն սկսեցաւ զպարն առաջինն փոխանակ Տիկին Շիժադէ Պետրոսին և Պարոն Պետրոսին սկսեցան Օրիորդ Թրիզիայն և Պարոն Փիլիպպոսն, յետ այնու հետևեցին այլքն… և յետ ելևանելոյն ’ի սեղանոյն մերձ 8 1/2 ժամին սկսեցին զպարն հանդիսական մինչև ցմերձ 5 ժամ առաւօտոյն»*[2]: Վստահ ենք, որ ակնարկվածը եվրոպական պար է եղել, դա է հուշում «զպարն հանդիսական» ձևակերպումը:

Հնդկահայերի մեջ պարահանդեսային պարերի տարածված լինելը հիշված է նրանց բանահյուսության մեջ: Մի տաղում՝ ստեղծված, հավանաբար, 19-րդ դարում, պարսկահայ հայրը, որդուն ուսման ուղարկելով Հնդկաստան, բացատրում է, թե ինչ է պարահանդեսային պարը՝ «բալը», որն առանց վարպետի՝ պարուսույցի հնարավոր չէ սովորել.

Քանզի էս պարն, որ բալն ան ասում, Շատ արուեստով ա, որ է մին ուսում. Պիտի դաս առնել դպրատան միջում, Առանց վարպետի մին բան չի ելնում: ……Սազն և հանգն շատ հին մնացած ա, Ածել և կանչելն շատ կարգաւոր ա. Նոյնպէս և պարն արուեստակերպ ա, Բայց խաղն և ձևն կարի անկերպ ա:

[1] Էմին 2018, 431:

[2] «Ազդարար» 1794, 181:

Պար գոլոցողն նազը դուզ կ'անի, Ջանազան կերպով միշտ կ'կուրատվի. Աչկով և յունքով, ձեռնով և դէմքով, Բան կիասկացնի, սուր կիրք ցոյց տալով[3]:

Այն, որ հնդկահայերի մեջ տարածված են եղել եվրոպական պարերը, վկայված է նաև 19-րդ դարի առաջին կեսին Հնդկաստան այցելած Պողոս Պետրոս Լազարովիչի հուշերում. *«Ջի մերազնեայք արք և կանայք բնակեալք 'ի քաղաքիս (Կալկաթայում – Ա. Բ.) քաջահմուտք են քան զանգղիացիս 'ի պար. և յոյժ սակաւք են 'ի նոցանէ տգէտք պարու և նուագարանաց»*[4]: Ուշագրավ և փոքր-ինչ կասկածելի է, որ, ըստ հեղինակի, հնդկահայերն այնքան էին առաջացել պարահանդեսային պարերի մեջ, որ անգլիացիներից ավելի «քաջահմուտք» էին, և որ նրանցից շատ քչերը չէին կարողանում պարել ու նվագել:

1847-ին հնդկահայ «Ազգասէր» պարբերականը, նշելով տարբեր ժողովուրդների մեջ միմյանց ողջունելու արտահայտությունները, գրում է, որ Կալկաթայի հարուստների թե աղքատների շրջանում նորաձև է դարձել ողջունելիս հարցնել՝ *«Պօլկա ուսանի՞ս,– լաւ պօլկայ եկա՞ր»*, որից հետո տեղեկություն է տրվել պոլկա պարի մասին. *«Պօլկա պար, կամ կենտրապար՝ ըստ արդ ի ծիսից՝ հարկաւոր խենեշանք են, պիտի՛ ուսանել: –Բայց և այնպէս՝ եթէ պօլկա եկողն այլևայլ պայծառ գիտութիւն չունենայ՝ ցաւելի է, զի 'ի վերայ բնական գեղջկութեան իւրոյ՝ յաւելու և զարուեստականն, միայն վասն ոտուսի* (sic) *առնելոյ զինքն»*[5]: Այստեղ հետաքրքրական է ոչ միայն պարը սոսկ որպես զվարճություն չդիտելու հորդորը («պայծառ գիտությամբ» այն իմաստավորելու ցանկությունը), այլև «խենեշանք» (մեղկություն, այլասերվածություն) բառի գործածությունը, որը տվյալ համատեքստում գործածվել է դրական՝ «ժամանց», «զվարճություն» իմաստով:

19-րդ դարի առաջին քառորդից սկսած՝ եվրոպական պարերը, բնականաբար, մուտք են գործել նաև Եվրոպայի և Ռուսաստանի հայօջախները, դարձել ընտանեկան հավաքույթների և ազգային միջոցառումների մաս: Նույն ժամանակահատվածում եվրոպական ոճի պարահանդեսները տարածում են գտել նաև բուն արևելահայ և արևմտահայ միջավայրերում, Կ. Պոլսի և Թիֆլիսի հարուստ հայերի շրջանում, որտեղ սկզբնապես տիրապետել են արևելյան պարերը: Այս մասին հիշատակել է 1820-ին Թիֆլիսում մի հարուստ հայի տանը հյուրընկալված իսպանացի զինվորական Խուան վան Գալենը, ով իր հուշերում գրել է, որ տանը եղել է հատուկ սենյակ պարերի համար, ընդ որում կանայք պարել են առանձին դահլիճում, ազգային նվագարանների ներքո, քանի որ ծանոթ չեն եղել եվրոպական պարերին[6]:

Իսկ գերմանացի ռազմական գործիչ Յոհան Բլարամբերգը 1836-ին Աստրախանում ներկա է եղել պարահանդեսի և իր հուշերում վկայել է, որ դրա ժամա-

[3] Երեմեան 1930, 62:

[4] Լազարովիչ 1832, 48:

[5] «Ազգասէր» 1847, 378:

[6] Арамян 2019, 141.

նակ կատարվել են ոչ միայն ռուսական և եվրոպական, այլև հայկական պարեր: Ըստ նրա՝ սեպտեմբերի 17-ին սրբուհի Սոֆյայի՝ գեներալուհի Սոֆյա Տ.-ի պահապան հրեշտակի օրը, վերջինիս ամուսինը կազմակերպել էր *«զգեստավորված պարահանդես, որին հրավիրվել էր ասպրախանյան հասարակության սերուցքը: Զարդարված գեղեցիկ հայուհիները հիանալի տեսք ունեին, իսկ երիտասարդ Կատերինա Տ.-ն, հագած Նորայի զգեստը, զմայլելի էր: Պարահանդեսը չափազանց աշխույժ էր: Հայկական և ռուսական պարերը փոխարինվեցին ֆրանսիական կադրիլներով»*[7]: Այս վկայությունն արժանի է ուշադրության. 19-րդ դարի առաջին կեսին, երբ տակավին գոյություն չուներ հայ բեմական պարային մշակույթ, իսկ ժողովրդականն էլ փակված էր բնաշխարհում՝ գյուղական միջավայրում, հանկարծ Աստրախանի քաղաքային միջավայրում խոսվում է հայկական պարերի կատարման մասին, այն էլ՝ ոչ ամբողջովին հայկական շրջանակում:

Հայ առաջին պրոֆեսիոնալ երգահանները, նախ և առաջ՝ Տիգրան Չուխաճյանը, սկսել են գրել նաև եվրոպական պարային ստեղծագործություններ՝ *վալս*, *կադրիլ*, *պարանպելլա*, *մազուրկա*, *գավոտ*, *պոլկա* ևն[8]: Եվրոպական պարերն ուսուցանել են ունևոր դասի աղջիկներին, հիմնականում՝ օտարազգի պարուսույցները, սակայն եղել են նաև հատուկենտ հայ պարուսույցներ: Պոլսահայ դերասան Միքայել Չափրաստը (1846–1907) համագործակցել է Պոլսում հյուրախաղերով հանդես եկող եվրոպական թատերախմբերի հետ և յուրացնելով եվրոպական պարերն ու դրանք ուսուցանելու մեթոդները՝ 1867-ին բացել է պարերի մասնավոր դպրոց: Նույն թվականին նա դարձել է Հակոբ Վարդովյանի թատերախմբի պարուսույցը, նաև Պոլսի տարբեր թաղամասերի հայկական վարժարաններում պաշտոնավարել է որպես պարի այցելու ուսուցիչ[9]:

Այսպիսով, 1867 թվականը հայ մշակույթի պատմության մեջ պետք է նշվի որպես հայ արվեստագետի նախաձեռնությամբ պարային դպրոցի հիմնադրման հիշարժան տարեթիվ, ինչը հարկ է դիտարկել 1860-ականների արևմտահայ կյանքում մշակութային նոր հիմնադրումների (1861-ին՝ «Արևելյան թատրոն» պրոֆեսիոնալ խմբի և Գրիգոր Սինանյանի ստեղծած առաջին հայկական սիմֆոնիկ նվագախմբի, 1868-ին՝ Տիգրան Չուխաճյանի «Արշակ Բ» առաջին հայկական օպերայի) ծիրի մեջ, իսկ Միքայել Չափրաստի անունը պետք է հիշվի որպես հայ իրականության առաջին պրոֆեսիոնալ պարուսույցի և պարադիրի:

19-րդ դարի վերջին ասպարեզ է իջել նաև պարահանդեսային պարերի առաջին հայերեն ուղեցույցը, – նկատի ունենք Միհրդատ Ն. Պարոնյանի՝ եվրոպական պարերի ուսուցման ձեռնարկը[10]: 1911-ին հրատարակվել է պարի մասին հայալեզու առաջին ընդարձակ գրքույկը՝ պարուսույց-պարադիր Խաչատուր

7 Бларамберг 1978, 33.

8 Ափոյան 2006, 22:

9 Պեշիկթաշլեան 1969, 361–362:

10 Պարոնեան 1898:

Խաչատուրյանի «Պարի ուղեգիրքը», որը սովորողների համար գործնական ուղեցույց լինելուց բացի՝ առանձին գլուխներով բացատրում է պարի ծագումը, պատմական զարգացումը, առողջապահական նշանակությունը: Խաչատուրյանը վկայել է իր հեղինակած «հայկական կադրիլի» մասին, *«որ ութնական զոյգերով պարուող և հինգ ձևէ (figure) բաղկացած սիրուն պար մըն է: .....Հայկական Գայրիլը կը պարուի երաժշտական չորս չորրորդ չափով և իւրաքանչիւր ձև ունի վաթսունը չորս չափ, ինչ որ հարիւր քսանը ութք կամ շարժում կը կազմէ»*[11]: Ցավոք, մեզ հայտնի չէ, թե պահպանվե՞լ են արդյոք Խաչատուր Խաչատուրյանի «հայկական կադրիլի» նոտաները:

Հայ իրականության մեջ պարերը դարձել են հանրային կյանքի բաղկացուցիչ մաս, սկսել են հիշատակվել հայ գրողների գեղարվեստական երկերում, ժամանակի հայ մամուլը պարբերաբար տեղ է հատկացրել պարի դպրոցների վերաբերյալ ծանուցումներին: Օրինակ՝ *«Պարերի ուսուցչուհին պատիւ է բոլոր նորագոյն, ինչպես նաև ասիական պարի դասեր: Ըստ ցանկության՝ իմբերով կամ առանձին»*[12]:

Անշուշտ, պարահանդեսները, որոնց մասնակցում էր երկսեռ հանրություն, թշնամանքով էին ընդունում պահպանողական խավերը: Հուշագրական գրականությունից հայտնի է, թե ժամանակին պոլսահայ կղերամոլների մեջ ի՛նչ մեծ դժգոհություն են առաջացրել խմբագիր Կարապետ Փանոսյանի ջանքերով Պոլսի առաջին երկսեռ Ագապյան վարժարանի հիմնադրումը և դրան ի նպաստ տրված պարահանդեսը: *«Հակառակորդ թերթերը չքաշուեցան անգամ գրելու, թէ Փանոսեան ազգային ՙպոռնկանոց՚ մը բացած էր և ուժ կուտար պոռնկութեան իր անտիպ պարահանդէսներով, ուր այր և կին իրարու պլլուած կը պարէին»*[13]:

Պարահանդեսների ավանդույթը շարունակվել է հայ գաղթավայրերում. դրանք կրել են տարբեր բնույթ՝ գեղարվեստական, զուտ ժամանցային, բարեգործական: Հաճախ տրվել են պարահանդեսներ՝ այս կամ այն հաստատությանը (միություն, դպրոց, մամուլ) ի նպաստ: Այդ պարահանդեսները կազմակերպել և դրանց մասնակցել են նաև հայ և օտարազգի պրոֆեսիոնալ պարողներ:

Ամփոփելով՝ կարող ենք նշել, որ պարահանդեսային պարը, լինելով եվրոպական քաղաքային, ավելին՝ մայրաքաղաքային երևույթ, հայությանը հասանելի դարձավ 18-րդ դարի վերջից, նախ Հնդկաստանում, ապա՝ Ռուսաստանում և Օսմանյան կայսրությունում: Թիֆլիսի և Պոլսի քաղաքային մշակույթի զարգացմանն ու աստիճանական եվրոպականացմանը զուգընթաց՝ այդ քաղաքների հայկական որոշակի խավեր մուտք գործեցին պարահանդեսային և պարի դպրոցների մշակույթը, մամուլում հրատարակվեցին պարի մասին գրու-

11 Խաչատուրեան 1911, 116:

12 «Эриванские объявления», 11.12.1913.

13 Թօլայեան 2019, 43:

թյուններ և ծանուցումներ, իսկ պարահանդեսները սկսեցին հիշատակվել նաև հայ գեղարվեստական գրականության մեջ:

ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱԶԴԱՐԱՐ 1794
«Ազդարար» պարբերական, Կալկաթա, 1794, Արամ ամսոյ, թ. 4, էջ 181:

ԱՓՈՅԱՆ 2006
Ափոյան Շ.Հ., Հայկական դաշնամուրային արվեստի պատմություն. 1850–1920, Երևան, Երևանի պետական կոնսերվատորիայի հրատ., 2006, 168 էջ:

ԵՐԵՄԵԱՆ 1930
Երեմեան Ա., Փշրանքներ ջուղահայ և հնդկահայ բանահիւսութիւնից (տաղեր և ժողովրդական երգեր). 17–19-րդ դար, Վիեննա, տպ. Մխիթարեան, 1930, 80 էջ:

ԷՄԻՆ 2018
Էմին Հ., Հովսեփ Էմինի կյանքն ու արկածները, Երևան, «Զանգակ», 2018, 526 էջ:

ԹՕԼԱՅԵԱՆ 2019
Թօլայեան Ե.Յ., Կավոշ-նամէ: Թատերա-խմբագրական յիշողութիւններ (ինքնակենսագրականով խառնուած) 1900–1935, Իսթանպուլ, «Արաս», 2019, 526 էջ:

ԼԱԶԱՐՈՎԻՉ 1832
Լազարովիչ Պ.Պ., Ստորագրութիւն Կալկաթայ քաղաքի զոր արար պարոն Պօղոս Պետրոս Լազարովիչ Կոստանդնուպօլսեցի ի ճանապարհորդել իւրում յարևելեան հնդիկս, Վենետիկ, տպ. Ս.Ղազարի., 1832, 56 էջ:

ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ 1911
Խաչատուրեան Խ., Պարի ուղեգիրքը, Կ.Պոլիս, 1911, 116 էջ:

ԱԶԳԱՍԷՐ 1847
«Ազգասէր», Կալկաթա, 1847, նոյեմբերի 27, թիւ 120:

ՊԱՐՈՆԵԱՆ 1898
Պարոնեան Մ.Ն., Թէ ինչպէս պէտք է պարել բօլկա, բօլկամազուրկա, վալս, զօթիշ,... Կ.Պոլիս, տպագրութիւն Արամեան, 1898, 47 էջ:

ՊԵՇԻԿԹԱՇԼԵԱՆ 1969
Պեշիկթաշլեան Ն., Թատերական դէմքեր, Անթիլիաս, Գէորգ Մելիտինեցի գրական մրցանակ, 1969, 1100 էջ:

АРАМЯН 2019
Арамян А.Г., Очерки истории армяно-испанских литературных и культурных отношений V–XX вв., Ереван, НАН РА ; Ин-тут лит-ры им. М. Абегяна, 2019, 197 с.

БЛАРАМБЕРГ 1978
Бларамберг И.Ф., Воспоминания, Москва, «Наука», 1978, 360 с.

***Artsvi H. Bakhchinyan**, Ph.D.*
Institute of History, NAS of RA

THE BALLROOM DANCES IN ARMENIAN REALITY

***Keywords**: ballet, ballroom dances, Armenian motifs, Armenians of India, Armenian writers about ballet, articles about dance.*

Ballroom dances, being a European urban, or rather metropolitan phenomenon, became accessible to Armenians from the late 18th century, first in India, and then in Russian and the Ottoman Empires. With the development and gradual Europeanization of urban culture in Tiflis and Constantinople, certain segments of the Armenian communities in these cities began to engage with the ballroom culture and ballroom dance schools. Articles and announcements about dance were published in the press, and ballroom dances started to be mentioned in Armenian literature as well.

***Арцви Генрикович Бахчинян**, к. ф. н.*
Институт истории НАН РА

БАЛЬНЫЕ ТАНЦЫ В АРМЯНСКОЙ ДЕЙСТВИТЕЛЬНОСТИ

***Ключевые слова:** балет, танцевальные представления, армянские мотивы, армяне Индии, армянские писатели о балете, статьи о танце.*

Бальные танцы, являясь европейским городским, точнее — столичным явлением, стали доступны армянам с конца XVIII века — сначала в Индии, а затем в Российской и Османской империях. С развитием и постепенной европеизацией городской культуры в Тифлисе и Константинополе определённые слои армянского общества этих городов начали приобщаться к бальной культуре и школам бального танца. В прессе публиковались статьи и объявления о танцах, а бальные танцы стали упоминаться и в армянской литературе.